ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1956 Общественные науки

Ա. Մելքոնյան

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԸ ՏՈՒՐՈՒԽԱՆՅԱՆ ԱՔՍՈՐՈՒՄ

1

1912 թ. մայիսի 22-ին, երբ Ս. Սպանդարյանը մեկնում էր Հյուսիսային Կովկաս, Բաքու չհասած, Բալաջարի կայարանում ձերբակալվեց, ետ բերվեց Թիֆլիս և նետվեց Մետեխի բերդը։ Սա նրա վեցերորդ բանտարկությունն էր։ Պահնորդական բաժնին քաջ հայտնի էր, որ Ս. Սպանդարյանը բոլշևիկյան պարտիայի ականավոր գործիչներից է, կրակոտ հռետոր, տաղանդավոր ժուռնալիստ, բոցաշունչ ադիտատոր և պրոպագանդիստ, որ նա եղել է Ռուսաստանյան կազմհանձնաժողովի անդամ, մասնակցել է Պրագայի կոնֆերանսին, ընտրվել է Պարտիայի Կենտկոմի և նրա ռուսական բյուրոյի անդամ։ Կոնֆերանսից վերադառնալով՝ շրջագայել է Մերձբալթյան երկրների քաղաքները, Պետերբուրգ, Մոսկվա, Բաքու, Թիֆլիս քաղաքներում զեկուցել է կոնֆերանսի արդյունքների մասին և այլն։ Մոսկվայի պահնորդական բաժնի 1912 թ. փետրվարի 9-ի զեկուցագրում ասված է հետևյալը. «Ե/Բաքվից — «Տիմոֆեյ» (նա ինքը «Սուրեն»)։ Էս-դեկ, մոտ 27—29 տարեկան, ինտելիգենտ, ազգությամբ հայ, թունդ լենինյան, Մոսկվայի համալսարանի նախկին ուսանող, 1908—1909 թթ. ակտիվորեն գործում էր Բաքվի ընդհատակյա պարտկազմակերպության մեջ և աշխատում էր հենց այդ ժամանակաշրջանում տապալված տեղական գաղտնի մեծ տպարանում... «Տիմոֆեյը» գաղտնի աշխատանքներ է կատարել նաև Մոսկվայում և Ս. Պետերբուրգում։ Շատ լուրջ էս-դեկ է։ Եղել է ՌՍԴԲՊ համապարտիական կոնֆերանսի դելեգատներ ընտրելու «Ռուսական կազմակերպական հանձնաժողովի անդամ»[1]։ Ձերբակալելով Ս. Սպանդարյանին, նրա մոտ «հանցավոր» ոչինչ չգտան, այնուամենայնիվ որոշվեց նրան վարչական կարգով արտաքսել Անդրկովկասից։ Այդ մասին նույնիսկ պահնորդական բաժնի գնդապետ Պաստրուլինը հայտնում է Ս. Սպանդարյանի կնոջը։

Ահա այս օրերին տեղի է ունենում հետևյալը. մատնությամբ ոստիկանության ձեռքն է ընկնում Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեի արխիվը, որտեղ կային Սպանդարյանի ձեռքով գրված պարտիական շատ կարևոր փաստաթղթեր (կոչեր, թռուցիկներ, «Ռուսաստանի սոց. դեմ. բանվ. պարտիայի պլատֆորման» 4-րդ Պետ. դումայի ընտրությունների առթիվ, նամակ Ստասովային այդ կապակցությամբ և այլն)։ Բանտարկվեցին և Սպանդարյանի հետ միասին դատի տրվեցին Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության ուրիշ անդամներ (Ե. Ստասովան, Վ. Շվեյցերը, Ա. Հովվյանը, Մ. Վախմինան, Վ. Խաչատրյանը և Ն. Հովհաննիսյանը)։

1913 թ. մայիսի 2—4-ը[2] Թիֆլիսի դատական պալատի հատուկ ատյանի դռնփակ նիստը՝ ՌՍԴԲՊ Կենտկոմի և Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության

---

[1] „Большевики (Документы по Истории большевизма с 1903 по 1916 год бывш. Московск. охранного отделения"), стр. [illegible]

[2] *Ամսաթվերը տալիս ենք հին տոմարով։*

գործով՝ Ս. Սպանդարյանին մյուս ընկերների հետ միասին «Միապետության դեմ ուղղված հանցավոր գործունեության համար» դատապարտեց ցմահ աքսորի հեռավոր Սիբիրում, զրկելով նրան բոլոր տեսակի իրավունքներից։

Մեր այս ուսումնասիրությունը նվիրված է Սուրեն Սպանդարյանի աքսորի ժամանակաշրջանի ռևոլյուցիոն գործունեությանը։

1913 թ. սեպտեմբերի 21-ին Ս. Պպանդարյանը շղթայակապ, էտապով աքսորվում է հեռավոր Սիբիր։ Ճանապարհից նա կնոջը գրում է, որ առայժմ ամեն ինչ կարգին է, միայն մի բան է վատ ու ծանր. «Ձեռքերս բոլոր ժամանակ շղթայված են»։ Հոկտեմբերի 10-ին էտապը հասնում է Կրասնոյարսկ և Սպանդարյանը նետվում է այնտեղի փոխադրական բանտը։

Շարունակվում են Սպանդարյանի տանջալից օրերը Կրասնոյարսկի փոխադրական բանտում, որտեղ չկային տարրական պայմաններ, հատկապես քաղաքական բանտարկյալների համար, որոնց ցարը դանդաղ ու տանջալից մահվան էր դատապարտում։ Բայց ոչ մի ծանր պայման ու տառապանք չեն կարողանում կոտրել անվեհեր բոլշևիկի երկաթե կամքը։ Նա առանց մազաչափ ընկճվելու միշտ արիության ոգի էր ներշնչում իր ընկերներին ու հարազատներին. «Ես դեռ Կրասնոյարսկի բանտում եմ,— գրում է նա իր կնոջը, 1913 թ. դեկտեմբերի 29-ին,— այստեղ ամեն տեսակ միջատներն ու անիծներն անպատիժ ուտում են ինձ. ամբողջ մարմինս չանգոտված է և արյունլվիկ։ Տրամադրությունս կայտառ է, ուրախ և լավ։ Կեցցե՛ կյանքը։ Մենք դեռ ոտքի կելնենք, կարիք չկա հուսահատվելու։ Սրանից վատթարն էլ է լինում։ Իսկ ուրիշների հետ համեմատած՝ իմ անախորժություններն ուղղակի դատարկ բան են»[1]։

1913 թ. նոյեմբերի 8-ին Սիբիրի սառնամանիքների պայմաններում Ս. Սպանդարյանը նորից շղթայակապ փոխադրվում է նշանակված աքսորավայրը՝ Ենիսեյան նահանգի, Կանսկ գավառի, Պերովսկ գավառակի Իննոկենտիևսկայա գյուղը, որտեղ նա ապրում է խիստ հսկողության տակ։

Չորս կողմից սկսվում են գրագրություններ Սպանդարյանի վրա խիստ հսկողություն սահմանելու մասին։ Տեղ հասնելու հաջորդ օրը, 1913 թ. նոյեմբերի 9-ին Կանսկ գավառի ժանդարմական վարչությունը կազմում է Սպանդարյանի մասին մանրամասն գործ[2], որտեղ նկարագրված է Սպանդարյանի ռևոլյուցիոն գործունեությունը՝ Անդրկովկասում, Մոսկվայում, Պետրոգրադում ու Մերձբալթյան երկրներում։ Այնտեղ Սպանդարյանը բնութագրված է, որպես տպարտիական ակտիվ գործիչ» ու ցարական ռեժիմի համար «խիստ վտանգավոր անձնավորություն»[3] և հրահանգված է շրջանի ժանդարմական հսկիչին նրա վրա «խիստ հսկողություն» սահմանել։

Կովկասյան ժանդարմական վարչությունն իր հերթին անհանգստանում է, որ հանկարծ կարող է թույլ հսկողության պատճառով Սպանդարյանը աքսորից փախչել, կազմում է մանրամասն անկետա Ս. Սպանդարյանի մասին, ուղարկում է Ենիսեյան նահանգի ժանդարմական վարչությանը և պահանջում է Սպանդարյանի վրա «սահմանել խիստ հսկողություն», Կանսկի գավառի ժանդարմական վարչության պետն իր հերթին 1913 թ. նոյեմբերի 21-ի զեկու-

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ։ Ֆ. 0։

[2] Տես Красноярский Краевой архив, ф. 34, д. 15.

[3] Նույն տեղում, ֆ. 34, գ. 15, թ. 24։

յագրում հաղորդում է Ենիսեյան նահանգական ժանդարմական վարչության պետին, որ Ս. Սպանդարյանը բնակեցված է նշանակված տեղում և նրա վրա սահմանված է «խիստ հսկողություն»[1]։

Ս. Սպանդարյանն աքսորատեղ հասնելուն պես՝ աշխույժ կապ է հաստատում շրջակա գյուղերում բնակեցված աքսորականների հետ, հենց սկզբից նկատելով որոշ մարդկանց մոտ տարբեր պարտիաների ու ֆրակցիաների պատկանող աքսորականների միջև տարբերություններ չնկատելու, աքսորականի բախտակցական համերաշխ կյանք վարելու տենդենց, հեգնանքով ասում է. «Որպիսի՞ անդորր, որպիսի՞ ներդաշնակություն. ամեն խնդրում համաձայն են իրար հետ, թե բոլշևիկները, թե մենշևիկները, թե էսեռները, սրանից լավ բան»[2]։

Աքսորում պատահում էին մանրբուրժուական թուլամորթ տարրեր, որոնց 1905—1907 թթ. ռևոլյուցիան մակերես էր բարձրացրել և մասնակից դարձրել ռևոլյուցիոն պայքարին, որի համար ցարը նրանց ևս աքսորել էր Սիբիր։ Այդպիսի տարրերը ամբողջովին հուսալքվում, ապատիայի էին ենթարկվում և կորցնելով հեռանկարը, չդիմանալով աքսորի դաժան պայմաններին, հաճախ իրենց կյանքին վերջ էին տալիս ինքնասպանությամբ։

Ս. Սպանդարյանը նմաններին և՛ ծաղրում, և՛ արիություն է ներշնչում, ցույց տալով նրանց բանվոր դասակարգի, պրոլետարիատի ռևոլյուցիայի գալիք հաղթանակի հեռանկարը։ «Ինչ եք թմրել ու տգաթևել,— ասում էր նա,— ռևոլյուցիան յոթը սարի հետևում չէ»[3]։

Աքսորատեղում Սպանդարյանը կրկնապատկված եռանդով ու արիությամբ շարունակում է գործել։

1913 թ. դեկտեմբերի 15-ին իր կնոջը՝ Օլգա Վյաչեսլավովնային ուղարկած նամակում նա գրում է. «Ուղարկեցեք գրքեր... Մենք ուզում ենք այստեղ դրադարան ստեղծել։ Խնդրիր ծանոթներին։ Ցանկալի է պատմության, էկոնոմիկայի, քաղաքատնտեսության մասին և այլն և այլն։ Ուղարկիր այն ամենը ինչ կարող ես, ամեն տեսակի գրականություն։ Ուղարկիր ինձ տվյալներ Կովկասի բնակչության մասին, ցեղերի քանակը յուրաքանչյուր նահանգում կամ մարզում և մի շարք մեծ քաղաքներում, օրինակ՝ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Քութաիսում և այլուր, որքան կա յուրաքանչյուր ազգությունից։ Տվյալները պետք է շատ թե քիչ նոր լինեն։ Ես մի բան եմ գրում «ազգային հարցի» շուրջը, վճռականապես պայքարում եմ ավտոնոմիայի դեմ, ի դեպ, գտիր Կովկասում դեմոստենոյի վերաբերյալ եղած նյութերը»[4]։

Այսպես, Սպանդարյանն այնտեղ ձեռնամուխ է լինում աքսորականների համար դրադարանի ստեղծմանը, ազգային հարցի մասին գիրք է գրում[5], աշխույժ կապ է հաստատում գավառի աքսորականների հետ և այլն։

1914 թ. մայիսի 1-ին Պերովկա գյուղի մոտի անտառում Ս. Սպանդարյանը կազմակերպում է Մայովկա, որին մասնակցում են շրջանի աքսորական-

---

[1] Տես Красноярский Краевой архив, ф. 34, գ. 13, թ. 27։

[2] Ս. Խաչոյան, «Սուրեն Սպանդարյան», 1927, Երևան, էջ 22։

[3] Նույն տեղում։

[4] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 6։

[5] Պահանջվող նյութերը չստացվեցին և Սպանդարյանը «Ազգային հարցի մասին» աշխատությունը չավարտեց։

ներն ու տեղի բնակչությունից, նա կրակոտ ճառով հանդես է գալիս այդ ցույցի ժամանակ։

Այս ժամանակամիջոցում Վ. Ի. Լենինը փորձում է կազմակերպել մի շարք աչքի ընկնող բոլշևիկ գործիչների փախուստը աքսորից։ Ն. Կրուպսկայան ուղարկում է նրանց գրամ, անցագրեր՝ արտասահման անցնելու համար։ Ս. Սպանդարյանի դրամը, անցագիրը ստացված, իր բարձի մեջ պահված է լինում։ Բայց այս բոլորն արվել էր հետագայում մերկացված պրովոկատոր Մալինովսկու միջոցով, որը և՛ ապահովել էր դրամի ու անցագրերի կազմակերպումն ու հանձնումը բոլշևիկ աքսորականներին, և՛ այդ մասին հայտնել էր պահնորդական բաժնին։

«Մալինովսկին,— գրում է Վ. Ի. Լենինը,— մատնեց տասնյակ ու տասնյակ լավագույն և ամենաանձնվեր ընկերների, նրանց ուղարկել տվեց տաժանակրության և արագացրեց նրանցից շատերի մահը»[1]։

Երբ հայտնի է դառնում մի շարք աչքի ընկնող պարտիական գործիչների, այդ թվում Ս. Սպանդարյանի փախուստը կազմակերպելու մտադրության մասին, ամբողջ ոստիկանությունն ու ժանդարմերիան ոտքի են հանվում, Պետերբուրգից Կրասնոյարսկ, Կրասնոյարսկից Ենիսեյսկ և Տուրուխանյան երկրամասի ժանդարմական բաժանմունքները թռչում են հեռագրեր, ճեպագրեր (депеше) ու հարցումներ։

Ներքին գործոց մինիստրության դեպարտամենտը իր 1914 թ. մայիսի 2-ի գրությամբ տագնապով հայտնում է Ենիսեյան նահանգի ժանդարմական վարչության պետին՝ Սվերդլովի, Սպանդարյանի և Ստալինի փախուստը աքսորից Լենինի կողմից կազմակերպելու մասին և վերջում ավելացնում է. «Հաղորդելով հիշյալի մասին՝ ոստիկանության դեպարտամենտը խնդրում է Ձերդ բարձր ազնվությանը՝ միջոցներ ձեռք առնել կանխելու հիշյալ անձերի փախուստը աքսորավայրից»[3]։

1914 թ. մայիսի 13-ին Ենիսեյսկի նահանգի ժանդարմական վարչության պետն իր հերթին հաղորդում է, որ «Պերովսկ գավառի աքսորականակ Սուրեն Սպանդարի Սպանդարյանը մտադիր է փախչել և, բացի այդ, նրան հանձնարարված է օգոստոսին Վիեննայում հրավիրվող համագումարի համար նյութեր պատրաստել»[4] և կարգադրում է ձերբակալել ու ավելի հեռու աքսորել Սպանդարյանին։

Այս բովանդակությամբ գրություն բազմաթիվ անգամ, բազմաթիվ ձևերով վերաշարադրված ուղարկվում է Ենիսեյսկի նահանգի ոստիկանության բոլոր բաժանմունքներին, բանտային վարչություններին ու տեսուչներին և կարգադրվում է խստագույն միջոցների դիմել Ս. Սպանդարյանի փախուստը կանխելու համար[5]։ Որոշվում է Սպանդարյանին ձերբակալել և ուղարկել ավելի հեռու, Տուրուխանյան երկրամասը, որի հիմանվրա Կանսկի գավառի առաջին ընա-

---

[1] Միայն Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո հայտնի դարձավ, որ Մալինովսկին պրովոկատոր է եղել, ռևոլյուցիոն տրիբունալի դատին տրվեց և գնդակահարվեց։

[2] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 31, Երևան, 1952, էջ 36։

[3] Красноярский Краевой Гос архив, ф. 34, д. 15, л. 30. Красноярский Краевой Гос. архив, стр. 34, опись 14—4952

[4] Канское Полицейское Управление, Дело о сосланном за государственные преступления ссыльном по ланце Сурене Спандарове Спандар нце.

[5] 1951 թ., երբ ես եղա Կրասնոյարսկում, Ենիսեյսկում և Տուրուխանսկում, այնտեղի արխիվներում տեսա նույն բովանդակությամբ բազմաթիվ գրություններ, Սպանդարյանի մասին գտա ավելի քան 81 ժանդարմական և այլ փաստաթղթեր։

կավայրի պրիստավը գրում է. «1914 թվականի մայիսի 25-ին, ես Կանսկի գավառի 1-ին բնակավայրի պրիստավս, նկատի ունենալով Ենիսեյսկի բանտային տեսչության ս./թ. մայիսի 14-ի № 10955 և գավառային տեսչության ս./թ. մայիսի 20-ի № 1068 գրությունը՝ պետական հանցագործության համար աքսորաբնակ Սուրեն Սպանդարովի Սպանդարյանցին Պերովսկ գավառակի Ինոկենտիևկա գյուղից պոլիցիայի խիստ հսկողության ներքո Տուրուխանյան երկիր փոխադրելու մասին՝ որոշեցի՝ հիշյալ Սպանդարյանին էտապային կարգով ուղարկել Տուրուխանյան բաժանմունքի պրիստավի տրամադրության տակ, իսկ առաջիկայում, մինչև աքսորյալների խմբի ուղարկելը, նրան կալանավորել Կանսկի բանտում, սահմանելով նրա վրա ուժեղ պահակություն։ Այս որոշման մասին իրեն հաղորդել»։

Որոշման վերջում Սուրեն Սպանդարյանի ձեռքով կա գրված հետևյալ տողերը. «Սույն որոշումը ինձ հայտնված է. Ս. Սպանդարյան»[1]։ Եվ Սպանդարյանը ձերբակալվում է։

Մայիսի 26-ի ժանդարմական մի այլ գրության մեջ (այլ գրություններում ևս) հաղորդվում է, որ Սուրեն Սպանդարով Սպանդարյանը շղթայակապ ուղարկված է Տուրուխանյան բաժանմունքի պրիստավի տրամադրության տակ[2]։

Երկաթե բարժայի վրա, նեխված ճահճուտներով, շղթայակապ, կտրելով 2000 կիլոմետր տարածություն, Ս. Սպանդարյանը հունիսի 25-ին հասնում է Տուրուխանյան երկրամասի Մոնաստիրսկոյե[3] գյուղը։

Տեղ հասնելուն պես, նույն օրը Ս. Սպանդարյանը իր կնոջը գրում է.

«Ես արդեն Տուրուխանյան երկրումն եմ և ճաշակում եմ նրա բոլոր «հրաշալիքները»... Գրքեր և թերթեր ուղարկեցեք ինձ։ Չէ՞ որ առանց դրան կարելի է բոլորովին խելագարվել... Ուղարկիր, կամ խնդրիր ուղարկել Միխ. Ալ. (Մ. Ա. Լարին — Ա. Մ.) հասցեն։ Ես նրան նամակ կգրեմ, որով կխզեմ նրանից իմ բոլոր հարաբերությունները լիկվիդատորական թերթում նրա վրդովեցուցիչ ելույթից հետո»[4]։

Լարինի հասցեին գրած տողերը ավելորդ անգամ ցույց են տալիս Ս. Սպանդարյանի սկզբունքային կայունությունն ու անողոքությունը դեպի մարքսիզմ-լենինիզմից շեղվողները։ Մ. Ա. Լարինը նրա մոտիկ ընկերներից էր, հին պարտիական աշխատող, ռևոլյուցիոն գործունեության համար 1902 թ. դատի տրվեց և 8 տարով աքսորվեց Սիբիր։ Ռեակցիայի տարիներին, երբ նա բռնեց լիկվիդատորական ուղի, Ս. Սպանդարյանը ամեն տեսակի կապերը խզեց նրանից։

Նույն նամակում Սպանդարյանը նկարագրում է Տուրուխանյան երկրի դաժան պայմանները. «Արդեն մի հանգամանք շատ բան է բնորոշում,— գրում է նա,— 1,624,500 քմ., իսկ բնակիչները 12 հազարից պակաս», ամեն բան թանկ է, աշխատելու հնարավորություն չկա, վարչական կարգով աքսորվածներին ամսական 15 ռուբլի նպաստ են տալիս, իսկ դատարանով աքսորյալներին ոչինչ։ — Կարող եք երևակայել իմ դրությունը,— շարունակում է նա։— Առաջվա աքսորում ես միքիչ վաստակում էի, կյանքն էլ էժան էր և մի կերպ ծայրը ծայրին հասցնում էի։ Այստեղ ես թողնված եմ բախտի քմահաճույքին և չգիտեմ ինչ անել»[5]։

[1] Красноярский Краевой Гос. архив, ф. 34, д. 15, л. 7.
[2] Նույն տեղում, ֆ. 34, գործ. 15, թերթ 31։
[3] Այժմ՝ Ն. Տուրուխանսկ։
[4] Մարքսիզմ լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխ., ֆ. 6, գ. 61։
[5] Նույն տեղում։

Մոնաստիրսկոյեն մի անկանելի բնական բանա էր, որից ոչ ոք դուրս պրծնել չէր կարող։ Այնտեղ գնացողի համար առաջին պահից թվում էր, թե բանի որ իր շուրջը ամայի, անծայրածիր, անմարդաբնակ տարածություն է, բանի գեռ ցուրտն ու քաղցը չեն լափել իր առողջությունը, կարող է անարգել փախչել, ինչպես Սպանդարյանն է գրում՝ «Դուրս գալ աշխարհ»։ Բայց այդ միայն թվում էր։ Հյուսիսից անմարդաբնակ առնդրան էր, գեպի այդ կողմը հեռանալու դեպքում սպասվում էր անխուսափելի սովամահություն, Արևելքից և Արևմուտքից տարածվում էին տայգայի անանցանելի անտառները, որտեղ ճանապարհներ չկային, թափառում էին գիշատիչ գազաններ, որոնք կարող էին առաջին երևացող անգեն մարդուն անմիջապես հոշոտել։ Միակ ճանապարհը Հարտվից մնում էր Ենիսեյ հսկա գետը, որը այս ափից մյուս ափը չի երևում, լայնությունը տեղ-տեղ հասնում է 8 կիլոմետրի, նրա վրա լողում են օվկիանոսային նավեր, երկարությունը 3807 կիլոմետր է։ Մոտային ճանապարհորդը Ենիսեյ գետի վրա նավով ավելի շատ ճանապարհ է կտրում, քան Լենինգրադից Լոնդոն անցնելիս։

Տեղի հասակավոր բնակիչները պատմում էին, որ աքսորյալները տեղ հասնելիս, սկզբից մտածում էին փախչելու մասին և փախչելու փորձերի գիմում էին, բայց, երբ համոզվում էին, որ Տուրուխանյան երկրամասից փախչելը անհնար է, նրանցից շատերը հուսալքված, իրենց կյանքին վերջ էին տալիս ինքնասպանությամբ, նետվում էին Ենիսեյ գետը, կամ խելագարվում էին։ Եվ բոլորովին զարմանալի չէ, երբ Տուրուխանյան երկիր աքսորված գեկաբրիստներից Շախովսկին խելագարվեց։

Կայսեր բոլշևիկը մազաչափ անգամ չի ընկճվում։ Նա կապ է հաստատում շրջակա գյուղերի աքսորականների հետ, նրանց հետ միասին սեսլյուցիան ազատատար է տանում տեղի բնակչության մեջ, ձեռնամուխ է լինում գերմաններին, ֆրանսերեն լեզուների ուսումնասիրությանը, ինչպես նաև հայոց լեզվի բերականության ուսումնասիրմանը։ Երևանեցիներից պահանջում է ուղարկել գերմաներեն և ֆրանսերեն լեզուների բառարաններ. «Այժմ,— գրում է նա իր երևանցիներին,— ես եռանդով զբաղվում եմ գերմաներեն լեզվով, իսկ մոտ օրերս կսկսեմ նաև ֆրանսերենը։ Մի բան վատ է, ես կանոնավոր բառարան չունեմ ոչ մեկ և ոչ մյուս լեզվից, չունեմ նաև բնթերցանության գիրք։ Գուցե դուք ունեք, ապա եթե կարող եք՝ ուղարկեք ինձ... Կմերազարձնեմ, երբ այլևս նրանց կարիքը չեմ ունենա»։ Բ. Շահպարոնյանից պահանջում է, որ նա ուղարկի իրեն Մ. Արեգբանի «Հայոց լեզվի բերականությունը»։

Սպանդարյանը երբ հասնում է Մոնաստիրսկոյե գյուղը, նրան մեծ հարգանքով ու հանդիսավորությամբ են գիմավորում այնտեղ աքսորված բոլշևիկներ Մասլենիկովը, Բոգրատը, Գոլբեշկինը, Լիտկինը և ուրիշները։ Առաջին ամիսը նա տեղավորվում է աքսորյալ բնակիչներից մեկի՝ Բոգրատի մոտ, ապա այնտեղ արտաքսված Լուկաշևիչը, որը մոտ էր կանգնած սեսլյուցիոնիստներին, և առատորեն էր զբաղվում, իր մեկ սենյակը նախատենյակով հանգիստ տրամադրում է Ս. Սպանդարյանին, որտեղ նա ապրեց 1914—1916 թթ., այսինքն մինչև իր հիասքանչ կյանքի վերջը։

Մոնաստիրսկոյե գյուղի հին բնակիչները մեծ հարգանքով ու ակնածանքով են հիշում Ս. Սպանդարյանին։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 6, գործ 108։

Մոնաստիրսկոյե գյուղի հին բնակիչ, ազգությամբ Լվենոկ, Կոնստանտին Ալեքսանդրովիչ Միցկին, որի հիշողությունները գրի առնվեցին մեր կողմից, Ս. Սպանդարյանի մասին հետևյալը պատմեց.

«Ես շատ լավ եմ հիշում ընկ. Ս. Սպանդարյանին։ Մի անգամ ինձ իր մոտ կանչեց Յակով Եֆրեմովիչ Բոգրատը, ծանոթացրեց Սպանդարյանի հետ ու ասաց, սա մեր լավ ընկերն է, օգնիր նրան, մենք դրա համար քեզ կվարձատրենք։ Այս 1914 թ. ամառն էր։ Ես այն ժամանակ ձի և սահնակ ունեի, նրա համար ջուր և փայտ էի բերում։ Նրանից հետո ես շատ հաճախ էի գնում ընկ. Սպանդարյանի մոտ։ Նա ուներ շատ գրքեր, գիտնական մարդ էր, իրավաբան։ Մի անգամ նա ինձ համար գիմում գրեց հաշտարար դատարանին, ինչպես և գիմումներ էր գրում շատ գյուղացիների համար»[1]։

«Մեզ գյուղացիներիս,—շարունակում է Միցկին,—զարմացնում էր Սպանդարյանի, այդ վտիտ մարդու մեծ եռանդը, մարդկանց հոգին արագ կարդալու կարողությունը։ Իր մոտ եկող գյուղացու վիշտ, լիներ թե հասարակական, թե անձնական-տնտեսական, արագ հասկանում և ուղղություն էր տալիս։ Նա շատ կարդում, գրում էր, գյուղացիներին հավաքում, նրանց հետ մոտ, սրտանց զրույցներ էր ունենում։ Նա մի անգամ պատմեց, որ ինքը Անդրկովկասից է, այնտեղ կլիման մեղմ է, տար, բուսնում են զանազան թաղցրահամ մրգեր, կգա ժամանակ, երբ բանվորները ու գյուղացիները իշխանության գլուխը կանցնեն, այն ժամանակ բուրժուաներին կքշենք այստեղ, աշխատավոր մարդիկ բոլոր տեղերում կապրեն ազատ ու երջանիկ։ Մենք չտեսնված հետաքրքրությամբ լսում էինք նրան, կլանում նրա յուրաքանչյուր բառը։ Կարճ ժամանակում տեղի բնակիչների մեջ և Ենիսեյի ափի հեռավոր գյուղերում նրա համբավը տարածվեց, որպես խոշոր գիտնականի»։

Հաղթահարելով իր թույլ օրգանիզմի համար անսահման դժվարություններ, Սպանդարյանը արագ հարմարվում է իր նոր բնակավայրին։ Նա վերցնում է փոքրիկ շնիկներ, խնամում ու մեծացնում է, ապա լծում սահնակ, տայգայից փայտ տեղափոխում, սովորում է դահուկներով շատ վարժ սահել, նավավարել նավակ։

Սպանդարյանը կարճ ժամանակում այնքան է վարժեցնում իր շներին, որ նրանց լծած արդեն շատ հեռավոր ճանապարհորդություններ է կատարում, գնում է հեռավոր գյուղեր (ինարկե ոստիկանությունից գաղտնի) ընկերների մոտ, շարունակում է պարտիական, ագիտացիոն պրոպագանդիստական աշխատանք տանել։

Վրա հասավ առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը։ «Աքսորավայրում,— գրում է Վ. Շվեյցերը,— սկսվեցին տաք վիճաբանություններ ու վեճեր պատերազմի մասին... Սուրենը մի շարք զեկուցումներով ու զրույցներով ապացուցում էր, որ մեր հիմնական գիծը պատերազմի վերաբերմամբ կարող է լինել միայն Ռուսաստանի պարտությունը, թե այդ պայմաններով մենք կարագացնենք ռևոլյուցիան... Եվ երբ երկար ժամանակից հետո Սուրենը ստացավ 7 թեզիսները[2] (Լենինի — Ա. Մ.) պատերազմի մասին... այն ժամանակ ամբողջ աքսորավայրը համոզվեց, թե Սուրենի նախագծած ուղին

---

[1] Ս. Սպանդարյանի տուն-թանգարան, К. А. Мицкий, „Воспоминания о жизни С. С. Спандаряна (Туруханске, 1914—1916 годы).

[2] Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 3—8։

ճիշտ է։ Ես հիշում եմ, թե ինչպես մեծ ուրախություն պատճառեց Սուրեն Սպանդարյանին, որ նրա մտքերը զուգադիպեցին Լենինի թեզիսների հետ»[1]։

Նույն կերպ է հիշում այն ժամանակ նույնպես աքսորարնակ ընկ. Շումացկին. «Տուրուխանի առաջին «պարտվողականը» Սպանդարյանն էր,— գրում է նա։ Սուրենը երկրի «մայրաքաղաք» Մոնաստիրսկոյեում համախմբում է իր շուրջը աքսորականների լավագույն տարրերին և իր հրաբորբոք ինտերնացիոնալիզմով հարկադրում է նրանց սրտերին բաբախել շովինիզմի դեմ. նա նախաղղում է ուսուցչի հանճարեղ մտքերը, որ այն ժամանակ գտնվում էր արտասահմանում և ազդարարեց՝ «պատերազմին պատերազմ»[2]։

Ս. Սպանդարյանը, ինչպես մեր ամբողջ պարտիան, անսահման սիրում էր համայն աշխարհի պրոլետարիատի հանճարեղ ուսուցիչ Վ. Ի. Լենինին և մինչև վերջը նա ուներ աշխույժ նամակագրություն նրա հետ։

1915 թ. փետրվարի 27-ին Ս. Սպանդարյանը գրում է Վ. Ի. Լենինին «Բարև Ձեզ, թանկագին Վլադիմիր Իլյիչ.

Այս րոպեիս Իոսիֆն ինձ մոտ հյուր է, և ցանկություն ծագեց ուղարկել Ձեզ մեր ողջույնը։ Ինչպես եք ապրում, ինչ եք անում, ինչպես է Ձեր տրամադրությունը։ Գրեցեք ինչ որ կարող եք։ Ծարավի ենք կենդանի խոսքի, կսպասենք Ձեր նամակին։ Ողջույն Նադեժդա Կոնստանտինովնային... և ընդհանրապես բոլոր բարեկամներին։

Սուրեն»[3]։

1915 թ. 4-րդ Պետական դումայի բոլշևիկյան ֆրակցիայի անդամները՝ Ա. Բադաևը, Գ. Պետրովսկին, Մ. Մուրանովը, Ֆ. Սամոյլովը և Ն. Շագովը, ցարիզմի և իմպերիալիստական պատերազմի դեմ բոլշևիկյան պրոպագանդա մղելու համար դատի տրվեցին և աքսորվեցին Տուրուխանյան երկիր։ Նրանց հետ միասին դատի տրվեց և աքսորվեց Կամենևը։ Նրանք Մոնաստիրսկոյե հասան 1915 թ. հուլիսի 5-ին։ Շուտով կայացավ Տուրուխանյան աքսորում գտնվող բոլշևիկների խորհրդակցություն, որտեղ Դումայի բոլշևիկյան ֆրակցիան զեկուցեց դատավարության պրոցեսի մասին։ Խորհրդակցությունը հիմնականում հավանություն տալով 5-յակի վարքագծին, խիստ դատապարտում է Կամենևի վարքագիծը, որը դատարանում իրեն պահել էր քաղբենիական երկչոտությամբ. հրաժարվել էր բոլշևիկյան պարտիայի քաղաքականությունից, հայտարարել էր, որ նա պատերազմի հարցում բոլշևիկյան պարտիայի քաղաքականության հետ համաձայն չէ, և այդ մասին վկայակոչելով մենշևիկ Իորդանսկուն՝ պահանջել էր նրան դատարան կանչել, իր՝ Կամենևի հակաբոլշևիկյան վարքագիծը պատերազմի հարցում հաստատելու համար։ Ս. Սպանդարյանը մյուս ընկերների հետ միասին հանդես գալով, խիստ դատապարտում է Կամենևին, դատարանում նրա արտասանած ճառը որակում է, որպես «լիբերալ ադվոկատի ճառ»։ «Այդ նիստում,— գրում է ընկ. Սամոյլովին,— Գ. Ի. Պետրովսկին զեկուցեց մեր դատական պրոցեսի մասին, իսկ Լ. Բ. Կամենևը լրացրեց նրան։ Զեկուցումից հետո կայացավ մտքերի աշխույժ փոխանակություն, որի ընթացքում ելույթ ունեցող ընկերները ցույց տվին մեր թույլ տված սխալները դատարանում, առանձնապես այդ շատ խիստ արեց ընկ. Սպանդարյանը»[4]։

---

[1] «Մարտակոչ», № 219, 26 սեպտեմբերի, 1926։

[2] Սուրեն Սպանդարյան, Հոդվածների ժողովածու, 1927, Երևան, էջ 17։

[3] „Пролетарская Революция" ժուռնալ, № 7, 1936, էջ 167։

[4] *Ф. Н. Самуилов*. По следам минувшего. „Большевики", стр. 522.

Սպանդարյանը դատապարտելով Կամենևի վարքագիծը դատարանում, ասում է, որ բոլշևիկ ռևոլյուցիոները պետք էր ցարական դատարանում արտասանած ճառում կարգար ցարական նեխված ռեժիմի մեղադրականը, ան վախ ու համարձակ կերպով շարադրեր բոլշևիկյան պարտիայի պլատֆորման. օգտագործեր դատարանի ամբիոնը բոլշևիկյան հայացքների տարածման, ցարական ռեժիմի և պատերազմի թալանչիական բնույթի մերկացման համար։

Սպանդարյանը հեռավոր Սիբիրից էլ միշտ իր հայացքն ուղղել է դեպի իր սիրելի ուսուցիչ Վ. Ի. Լենինը և մինչև իր կյանքի վերջը շարունակել է նրա հետ աշխույժ նամակագրություն։ 1915 թ. օգոստոսին նա Վ. Ի. Լենինին ու Ն. Կ. Կրուպսկայային գրում է.

«Թանկագին ընկերներ։ Ողջույն Ձեզ Բևեռային երկրից։ Մի քանի անգամ գրել ենք, բայց չգիտենք, Ձեզ լուրեր հասել են այստեղից... Մենք մեկ առույգ ենք զգում և տրամադրված ենք օպտիմիստորեն։ Մենք ընդհանրապես օպտիմիստներ ենք... Ձեր Տիմոֆեյ»[1]։

1915 թ. սեպտեմբերի 28-ի նամակում Սպանդարյանը գրում է Վ. Ի. Լենինին ու Կրուպսկայային.

«Բարեկամներ. Ձեր 28/8 նամակն ստացանք։ Նա շատ վնասվել է երկար ճանապարհորդությունից դեպի մեր բևեռային երկիրը, այդ պատճառով էլ շատ նման է Ասորեստանի թագավորների դժվարընթեռնելի բևեռագրերին։ Այնուամենայնիվ շնորհակալություն նամակի համար։ Մենք ողջ և առողջ ու առույգ ենք և մտադիր ենք այսուհետև ևս նույն վիճակում մնալ։ Այդ բոլորը ցանկանում ենք նաև Ձեզ։ Ողջույն մեզանից բոլորիդ, Ձեր Սուրեն»[2]։

Բանտն ու հալածանքները, Սիբիրի դաժան պայմանները՝ սառնամանիքն ու կիսաքաղց վիճակը և աննկարագրելի տանջանքները ֆիզիկապես հյուծում ու քայքայում էին Սպանդարյանի առողջությունը, անճանաչելու չափ փոխում նրա դեմքը, բայց մազաչափ անգամ չէին կարողանում կոտրել նրա պողպատե կամքը, թուլացնել նրա ռևոլյուցիոն էնտուզիազմն ու եռանդը։

Սպանդարյանը հեռավոր Սիբիրից միաժամանակ կապ է պահպանում Թիֆլիսի, Բաքվի, Պետերբուրգի և այլ քաղաքների բանվորների հետ։ Իր նամակներում նա բանվորներին ուղղություն էր տալիս, ոգևորում նրանց, խարազանում էր բանվորների շրջանում տեղ գտած մեշչանական տրամադրությունները։ Պետերբուրգի բանվորներից ստացված մի նամակի առթիվ Սպանդարյանը գրում է.

«Այս օրերս... «Պետերբուրգից» մի խումբ բանվորներից ստացա երկու ռուբլի երեսուն կոպեկ և մի քանի սրտագին տողեր։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ չնչին գումարը ինձ համար ոչ մի նյութական նշանակություն չունի, բայց ինչքան մխիթարություն, ինչքան բարոյական ուժ է տալիս այդպիսի ուշադրությունը»[3]։

Միաժամանակ նա նամակ է ստանում Թիֆլիսից մի գրաշար բանվորից (անունը՝ Նշան), որն իր նամակում գրում է, որ Ս. Սպանդարյանն իր կրթությամբ, իր ընդունակություններով ու խելքով կարող էր «լավ ու շքեղ կյանք ունենար», եթե իրեն չնվիրեր ռևոլյուցիոն գործին, մինչդեռ «աքսորվելով Սիբիր մուժիկ է դառել»։

---

[1] Архив Института Марксизма-ленинизма, опись 27297.

[2] Նույն տեղում, опись 27234.

[3] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. 6. գ. 112։

Սպանդարյանը խորը զայրույթով պատասխանում է այդ բանվորին. «Ես մուժիկ» չեմ դարձել, երկրորդ, ես լավ գիտակցում եմ, ինչո՞ւ համար եմ այս գրության մեջ, երրորդ բանվորը այս պայմաններում ինձպես մարդուն այդպիսի բաներ չպետք է գրի... Միանգամայն թքել եմ «լավ և շքեղ կյանքի վրա»[1]։

2

Հեռավոր Սիբիրից մեծ ռևոլյուցիոների մեծ սիրտը միաժամանակ բաբախում է նաև հայ ժողովրդի համար։ Նա բազմաթիվ անգամ նամակներ է գրում իր անզուգական ընկեր Ստեփան Շահումյանին ու Կովկասում աշխատող մյուս պարտիական ընկերներին՝ հորդորելով պայքարել հայ ժողովրդի կոտորածները կանխելու համար։

1915 թ. դեկտեմբերին Բ. Շահպարոնյանին ուղղած նամակում Ս. Սպանդարյանը գրում է. «Այդ ինչեր են կատարվում այդտեղ։ Վայ էն ազգին, որի ճակատագիրը վճռում են ծակ փիլիսոփա Վարանդյանը... և «ազգային», բայց առանց տաղանդի փաստաբան, տիպիկական ֆիլիստեր Սամսոն Հարությունյանը»։ Մի՞թե ժամանակը չէ, մի՞թե մարդիկ չկան, որ այդ ոճրագործների վզին տան և այն չնչինը, որ գեռ մնացել է, ազատեն, պահպանեն։ Սիրտս այրվում է, էլ չգիտես քանի անգամ սկսել եմ գրել... Բաքու, առաջադրելով մի որևիրան գործել այդ ժողովրդասպանների գեմ»[3]։

Մի ուրիշ նամակում ավելի սրտաճմլիկ ու անհուն կսկիծով Ս. Սպանդարյանը գրում է. «Սիրտս կծկվում է ու արյունոտվում, երբ կարդում եմ այն հալարավոր փախստականների մասին, այն խեղճ ու տառապյալ, անլուր տանջվող և արյունոտ ժողովրդի, բռնաբարված կանանց ու մորթված երեխաների մասին։ Ահա հայ ազգային քաղաքականությունը, ահա ողորմություն հայցող դաշնակների հեղափոխությունը։ Տաճկաստանի ազատություն։ Այո, «ազատություն», բայց առանց հայերի, այո, «ազատություն», որ դառնում է Պուրիշկևիչների և Միլյուկովների զավթոան»[4]։

Բայց նա դրա հետ միասին չի հուսահատվում։ Խորը հավատով լցված դեպի Ռուսաստանի բանվոր դասակարգի, սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը, որով կազատագրվեն բոլոր ճնշված ժողովուրդները, որոնց թվում նաև հայ ժողովուրդը, Սպանդարյանը խորը օպտիմիզմով գրում է. «Կգա ժամանակը, մշուշը կցրվի, վրա կհասնի արցունքների ծովի, արյան օվկիանոսների, միլիոնավոր խորտակված կյանքերի հատուցման ժամը»։

Այո, Սպանդարյանը չսխալվեց։ Ամբողջ աշխարհը ականատես եղավ այդ հատուցման ժամին։

Հետաքրքրական են, ուսանելի են, մանկավարժորեն խիստ դաստիարակչական են Ս. Սպանդարյանի հեռավոր Սիբիրից գրած նամակներն իր սիրասուն երեխաներին, որոնց նա անհուն սիրով սիրում էր, որոնց անշեջ կարոտը սրտում մեռավ։ Այդ նամակների վրա դժբախտաբար հոդվածի ծավալը թույլ չի տալիս կանգ առնել։

1915—1916 թթ. ձմեռը Ս. Սպանդարյանի առողջությունը գնալով ավելի ու ավելի է սկսում վատանալ, ինչպես նրա հետ աքսորում եղած ընկերներն

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 6, գ. 108։
[2] Վարանդյան—դաշնակցական պարագլուխ։ Ս. Հարությունյան—հայ կապետների պարագլուխ։
[3] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 6. գ. 110։
[4] Ս. Եսայան, Սուրեն Սպանդարյան, Երևան, 1927, էջ 27։

էն պատմում, սկսում է «մոմի նման հալվել»։ Բայց նա շարունակում է եռանդուն գործել, կազմակերպել ու մասնակցել աքսորականների զանազան խորհրդակցություններին, զեկուցումներով հանդես գալ, նամակագրություններ շարունակել ընկերների հետ, արձագանքել երկրի քաղաքական կյանքի ամենահրատապ հարցերին։ Նա 1915 թ. մարտի 20-ին Շահպարոնյանին գրում է. «Ով է խմբագրում «Պայքար»-ը։ Շատ անհամ բան է, կույրաբար հետևում է վրաց թերթերին (մենշևիկյան — Ա. Մ.)։ Էլ չեմ ասում, որ լիկվիդատորական հոտը հո հեռվից արդեն զգացվում է... Ես բոլոր ժամանակ հիվանդ եմ, հազիվ հազ գրում եմ»[1]։

Ցարական բանակի պարտությունները ֆրոնտում, ազգային ազատագրական շարժումները Հայաստանում և մյուս երկրամասերում, բանվոր դասակարգի և գյուղացիության ռևոլյուցիոն շարժումների աշխուժացումը միաժամանակ հողեկան արիություն էին ներշնչում ֆիզիկապես թուլացած Ս. Սպանդարյանին։ Նա սրտատրոփ սպասում էր գալիք ռևոլյուցիայի փոթորիկներին և պատրաստ էր արիարար նետվելու ռևոլյուցիայի փոթորկահույզ ալիքների մեջ ու խիզախորեն մարտնչելու ռևոլյուցիայի հաղթանակի համար։ Նա շարունակում է չթուլացող եռանդով գործել։

1915 թ. փետրվարին, ցարական կառավարության կողմից փակված բոլշևիկյան «Вопросы Страхования» ժուռնալը նորից լույս տեսավ։ Բոլշևիկյան այս ժուռնալը, որ լույս էր տեսնում լեգալ, պարտիական կյանքում, հատկապես լիկվիդատորության դեմ մղած կռվում մեծ գեր խաղաց։ Երբ այս ժուռնալի առաջին համարը հասավ Տուրուխանսկ, Սպանդարյանը մի խումբ աքսորական բոլշևիկների հետ միասին հավաքեց դրամական միջոցներ և ողջույնի տողերի հետ միասին 1916 թ. մարտին ուղարկեց ժուռնալի խմբագրությանը[2]։

Հենց այս նշանավոր փաստաթուղթը գրելու օրերին, Ս. Սպանդարյանի առողջությունը սկսում է խիստ վատանալ։ Ս. Սպանդարյանը դեռ 1915 թ. դեկտեմբերին դիմել էր նահանգապետին, որպեսզի բուժվելու նպատակով իրեն թույլատրվի ապրել Ենիսեյան նահանգի քաղաքներից մեկում և 1916 թ. հունվարի 29-ին ստացել հետևյալ պատասխանը.

«Գեներալ-նահանգապետի դրասենյակը հայտնում է Տուրուխանյան երկրի աքսորարնակ Սուրեն Սպանդարով Սպանդարյանին, որ նրա 1915 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը տրված Նորին գերազանցությանը՝ միջնորդելու մասին նրան ապրելու Ենիսեյան նահանգի քաղաքներից մեկում, երկրամասի գլխավոր պետի կողմից թողնված է անհետևանք»[3]։

Այնուամենայնիվ աքսորյալ բոլշևիկների խորհրդակցությունը որոշում է նորից միջնորդել Պետերբուրգ՝ կառավարության առաջ՝ Սպանդարյանին բուժման նպատակով Ենիսեյան քաղաք փոխադրելու համար։ Պետերբուրգից ստացված կարգադրության համաձայն Կրասնոյարսկից դատախազը գալիս ստուգում է Սպանդարյանի վիճակը, որից հետո միայն նրան թույլատրում են տեղափոխել Ենիսեյսկ քաղաքը։ Այս առթիվ Շահպարոնյանին 1916 թ. մայիսի 28-ին գրած նամակում Ս. Սպանդարյանն ասում է. «Ես շատ հիվանդ եմ, ծանր դրության մեջ եմ։ Այս օրերս շոգենավով եկավ պրոկուրորը և Պետերբուրգից

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. ս. գ. 114։

[2] Տես „Вопросы Страхования". № 6, մայիս, 1916. որտեղ մի խումբ աքսորված բոլշևիկների ստորագրությամբ լույս է տեսել այդ ողջույնը։

[3] Красноярский Краевой Гос. архив. ф. 34, д. 15, л. 15.

եկած հրամանի համաձայն ենթարկեց ինձ բժշկական վկայության և անմիջապես վերադարձավ Կրասնոյարսկ, տանելով իր հետ պրոտոկոլը։ Ինչ կլինի չգիտեմ։ Էտապով ճանապարհվելն ինձ համար մահ է»[1]։

Այդ նույն օրը, 1916 թ. մայիսի 28-ին, Սպանդարյանը նամակ է ուղարկում Վ. Ի. Լենինին և Կրուպսկայային, որտեղ, նորից պահպանելով ոգու կայտառությունը, գրում է.

«Թանկագին ընկերներ։ Հղում ենք Ձեզ մեր սառը երկրից ամենաբոցավառ ողջույնը։ Մենք ոգով արի ենք և նույնը ցանկանում ենք Ձեզ։ Գրեցեք թեկուզ ոչ հաճախ։ Իմաց տվեք այդտեղի գործ ու մարդի և կյանքի մասին։ Գրեցեք Ձեր վերաբերմունքի մասին դեպի «Լետոպիս»-ը[2]։ Մեզ հավատացնում են, իբր թե Դուք (այսինքն՝ Վ. Ի. Լենինը — Ա. Մ.) համաձայնության եք եկել, և քիչ է մնացել ձեր աշխատություններն ուղարկեք այնտեղ։ Այս, ճի՞շտ է արդյոք։ Ինչ որ անհավատալի է։ Երմանսկիներ, Վալսկիներ և Դուք։

Նորից ողջույն բոլոր ընկերներին և բարեկամներին»[3]։

Այս տողերը նույնպես հաստատում են բոցաշունչ բոլշևիկի կայունությունն ու անսահման սկզբունքայնությունը։

Ս. Սպանդարյանը ծանր վիճակում պառկած էր անկողնում։ Նրան Տուրուխանյան երկրամասից փոխադրելու կապակցությամբ սկսվում են բազմաթիվ գրագրություններ։ Վերջապես երկար ձգձգումներից հետո թույլատրվում է նրան փոխադրել Ենիսեյսկ քաղաքը։ Բոլշևիկ աքսորյալների միջնորդությամբ, Սպանդարյանին ուղեկցելու և խնամելու համար թույլատրվում է նաև Վ. Լ. Շվեյցերին փոխադրվել Ենիսեյսկ քաղաքը։ Այս առթիվ Ենիսեյսկի նահանգային բանտային տեսչությունն իր 1916 թ. հունիսի 4-ի № 76637 գրությամբ հայտնում է հետևյալը. «Տուրուխանյան երկրամասի պետական հանցագործության համար աքսորաբնակ Սուրեն Սպանդարով Սպանդարյանը և նույն հանցագործության համար Կանի դավառի Պետրովսկ վոլոստի աքսորաբնակ Ռեվեկա Լազերևնա Շվեյցերին նահանգի պ. կառավարչի կողմից թույլատրված է ապրելու Ենիսեյսկի քաղաքում, որտեղ այժմ մեկնել է Շվեյցերը»[4]։

Հունիսի 20-ին Սպանդարյանին տրվեց անցման վկայական՝ Ենիսեյսկ քաղաք փոխադրվելու համար, վերցնելով նրանից ստորագրություն։ Այդ փաստաթուղթը, որ գրված է ծուռումուռ ձեռագրով և վկայում է Սպանդարյանի ծանր վիճակը, հետևյալ բովանդակությունն ունի.

«20 հունիսի 1916 թ. ես, ներքո ստորագրող պետական հանցագործության համար Տուրուխանյան երկրամասի աքսորաբնակ Սուրեն Սպանդարով Սպանդարյանս, տալիս եմ սույն ստորագրությունը այն մասին, որ բաժանմունքի պրիստավի № 276 անցման վկայականը (переходное свидетельство) երկրամասից Ենիսեյսկ քաղաք փոխադրվելու մասին այսօր ստացա, որպիսին պարտավորվում եմ Ենիսեյսկ քաղաք հասնելուն պես ներկայացնել Ենիսեյսկի

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 6, գ. 115։

[2] „Летопись"-ը ինտերնացիոնալ ուղղության մի ժուռնալ էր, որի հրատարակմանը մեծագույն մասնակցություն ուներ Մ. Գորկին, բայց նրա խմբագրության մեջ աշխատում էին նաև օտզովիստ Ս. Վալսկին և մենշևիկ լիկվիդատոր Օ. Ս. Երմանսկին։ Այս հանգամանքը կապած է հարուցում Սպանդարյանի մեջ, այդ պատճառով նա անձամբ ուզում է իմանալ արդյոք ճիշտ է խոսակցությունն այն մասին, որ Լենինը մասնակցելու է այդ ժուռնալին։

[3] Архив Института марксизма-ленинизма, опись 27233.

[4] Красноярский Краевой Гос. архив, ф. 34, д. 15, л. 19

գավառային պ. ոստիկանապետին, որի համար ստորագրում եմ. Սուրեն Սպանդարյան»[1]։

Հենց այս նույն օրը, 1916 թ. հունիսի 20-ին Ենիսեյսկ քաղաքի հետախուզական բաժնի պետ Ռուսիանովը լսելով Սպանդարյանին Ենիսեյսկ փոխադրվելու համար թույլտվություն տալու մասին, տագնապով նահանգական ժանդարմական վարչության պետին գրում է. «Բանտային տեսչության ս./թ. հունիսի 4-ի № 7637 գրությամբ հաղորդված է գավառային ոստիկանապետին, որ պ. նահանգապետի կողմից աքսորաբնակ Սուրեն Սպանդարով Սպանդարյանին թույլատրված է ապրելու Ենիսեյսկ քաղաքում։

Սպանդարյանը հայտնի է աքսորյալների լայն մասսաներին, որպես ակտիվ ռևոլյուցիոն գործիչ, աշխույժ նամակագրություն ունի աքսորված դեպուտատների հետ, նրանց միջոցով դրամական օգնություն է ստանում և այժմ Ենիսեյսկ գալով, անպայման աքսորված դեպուտատների հետ համագործակցած ռևոլյուցիոն գործունեություն կծավալի։

Նկատի ունենալով վերը շարադրածը և Ձերդ բարեծննդության 1914 թ. մայիսի 23-ի № 53780 գրությունը նրա կողմից փախուստի փորձը, միջնորդում եմ Սպանդարյանին Ենիսեյսկ քաղաքի փոխարեն տեղավորել Ենիսեյսկի գավառի ավելի քիչ բնակչություն ունեցող բնակավայրերից մեկում»[2]։

Բայց և այնպես Սպանդարյանի վիճակն արդեն անհուսալի էր։ Հունիսի 27-ին իր դուստր Մարիային գրում է. «Հազիվ հազ քայլում եմ, բոլոր ժամանակները շնչահեղձ եմ լինում, ոտքերս ուռել են... Շատ ծանր է, բայց այնուամենայնիվ ես քաջալերվում եմ և հույս ունեմ դեռ որոշ ժամանակ ապրել։ Հատկապես շատ վատ եմ լինում գիշերները... Ինձ մոտ գիշերում են ընկերները, բարեկամները և ինչով կարողանում են օգնում են»[3]։

Հուլիսի 1-ին Սպանդարյանը Շվեյցերի ուղեկցությամբ, ժանդարմների խիստ հսկողության ներքո հասնում է Ենիսեյսկ քաղաքը և տեղավորվում է մի մասնավոր բնակարանում, որը նախօրոք վարձել էր Վ. Լ. Շվեյցերը։ Այստեղ էլ նրա վիճակը շարունակում է մնալ անհուսալի, գավառական քաղաքում չկային որակյալ բժիշկներ։ Հարկ կար նրան փոխադրելու ավելի մեծ քաղաք, որտեղ կային որակյալ բժիշկներ։ Բայց իշխանությունը թույլ չէր տալիս։ Բազմաթիվ անգամ տված դիմումները և՛ Սպանդարյանի և՛ աքսորյալ բոլշևիկների կողմից, մերժվում էին։ Միայն 1916 թ. օգոստոսի 8-ին, Սպանդարյանի մահվանից մոտ մեկ ամիս առաջ, ցարական կառավարությունն արդեն տեսնելով նրա անհուսալի վիճակը՝ որոշում ընդունեց նրան ազատել աքսորից։ Ցարի օգոստոսի 8-ի ընդունած որոշումը, որը Ենիսեյսկ հասավ օգոստոսի 25-ին, հետևյալ բովանդակությունն ուներ. «Իրավունքներից զրկված Սուրեն Սպանդարով Սպանդարյանին այսուհետև աքսորում մնալուց ազատել հենց այժմվանից, նրան իրավունք տալ բնակվելու կայսրության սահմաններում ամեն տեղ, բացի մայրաքաղաքներից և մայրաքաղաքային նահանգներից, թողնելով 5 տարի ոստիկանության հսկողության տակ, ճանաչելով քր. օր 43 հոդ. նրա առանձին իրավունքների վերականգնումը, սակայն առանց վերականգնելու գույքի նկատմամբ եղած իրավունքները»[4]։

Այս որոշումն ստանալուց հետո հնարավոր եղավ նրան փոխադրել Կրաս-

---

[1] Красноярский Краевой Гос. архив, ф. 34. ц. 13, р. 17։
[2] Նույն տեղում, ф. 4, ц. 1921, р. 787։
[3] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլար, ф. 6. ц. 86։
[4] Красноярский Краевой Гос. архив, ф. 34, ц. 15, р. 21։

Նոյարսկ՝ բժիշկների ընկերության քաղաքային մասնաճյուղ հիվանդանոցը, որտեղ աշխատում էր բժիշկ Ֆեոդոր Դուսարովը, որը համակրում էր բոլշևիկներին և առանձին հոդատարություն ցուցաբերեց դեպի Ս. Սպանդարյանը։ Բայց այլևս ոչ մի հոդատարություն բոցաշունչ բոլշևիկի հիասքանչ, հերոսական կյանքը փրկել չէր կարող, թեպետ ինքը՝ Ս. Սպանդարյանը մահանալու մասին չէր մտածում։ Նա շարունակում էր մտածել իր սիրած գործի՝ ռևոլյուցիայի մասին։ «Բժիշկները,— գրում էր ընկ. Ավել Ֆունիկիձեն,— նրա գրությունն անհուսալի էին գտնում, թեև ինքը՝ Սուրենը, Ինիսեյսկից և անցած դժվարին ճանապարհորդությունից հետո զգալի չափով սկսել էր կաղդուրվել, առույգ էր և բոլորովին չէր զգում մահվան մոտենալը... Վերջին անգամ ես նրա մոտ էի մահվան նախօրյակին, երեկոյան։ Նրա վերջին ինձ ուղղած խոսքերն էին՝ «վաղը գնալիս մտիր»... Նա մինչև վերջին ժամերն անգամ հետաքրքրվում էր ամեն բանով և ամենից քիչ մահվան մասին էր մտածում, որով և ինձ վարակել էր մի հավատով, որ նրա առողջությունը դեպի լավն է գնալու»[1]։

Ընկերների գնալուց հետո, գիշերը Ս. Սպանդարյանի մոտ է մնում նրա տառապանքների անբաժան ընկեր Վ. Շվեյցերը, որի ձեռքերի վրա էլ հանգչում է անվեհեր բոլշևիկը։

1916 թ. սեպտեմբերի 11(24)-ին, առավոտյան ժամը 6-ին, Կրասնոյարսկի բժիշկների ընկերության հիվանդանոցում, հավերժական քնով քնեց Սուրեն Տիմոֆեյ Սպանդարյանը։ Նրա վերջին խոսքերն էին «Ռևոլյուցիան կանգնած է 1917 թ. շեմքին, կանգնեցեք Լենինի դրոշի տակ»[2]։

Սիբիրի սեպտեմբերյան մի մռայլ անձրևոտ օր տեղի ունեցավ Ս. Սպանդարյանի թաղումը։ Հուղարկավորությանը մասնակցեցին աքսորյալ բոլշևիկները, տեղի բոլշևիկյան կազմակերպության անդամները և անպարտիականները։ Դագաղը ծածկված էր պսակներով։ Ցարական կառավարությունը վախեցավ անվեհեր բոլշևիկի անշունչ դիակից անգամ, նա վախենում էր, որ զնդաններում ու տարագրության մեջ տանջամահ ռևոլյուցիոների հուղարկավորությունը կարող է վերածվել բողոքի ցույցի, «անկարգության», այդ պատճառով հուղարկավորներին ուղեկցեցին զինված ոստիկանները։

Ս. Սպանդարյանի մահվան մասին հետևյալն է արձանագրված Կրասնոյարսկ քաղաքի չափարերական մատյանում.

Մահացողների հաշիվները	Մահվան ամիսը և թիվը	Մահացողի անունը հայրանունը և ազգանունը	Մահացողի տարիքը	Ինչից է մահացել	Ով է խոստովանեցրել և հաղորդություն տվել	Ով է թաղել և որտեղ է թաղված
226	Սեպտեմբերի 11 — 12	Ուսանող աքսորական, Սուրեն Սպանդարի Սպանդարյաս	33	Սրտի արատից	Հայ, թաղված է առանց քրիստոնեական արարողության	Քահանա Ալեքսեյ Սելեկին։ Թաղված է Տրոիցկիյ գերեզմանատանը[3]

[1] «Սուրեն Սպանդարյանը» (հոդվածների ժողովածու)» էջ 57—58, Երևան, 1927։

[2] „Комсомольский Пропагандист и агитатор", № 13 (17), 1937 г., Վ. Շվեյցերի „Сурен Спандарян" հոդվածը։

[3] Красноярский Краевой Гос. архив, Метрическая книга 1916 года, часть третья о умерших, лист. 66.

3

Սպանդարյանի մահը մեծ կորուստ էր բոլշևիկյան մեծ պարտիայի համար։ Նրա օրգան «Սոցիալ-դեմոկրատ» թերթը Ս. Սպանդարյանին նվիրած նեկրոլոգում նշեց այն մեծ կորուստը, որ կրեց պարտիան Սպանդարյանի մահով և այն մեծ ծառայությունը, որ նա մատուցել է պարտիային[1]։

«Պայքար» թերթի մի քանի համարներում գրվեց Ս. Սպանդարյանի մահվան մասին, նրա էջերում լույս տեսան Ս. Շահումյանի, պարտիական ուրիշ շատ աչքի ընկնող գործիչների, բանվորական կոլեկտիվների, ինտելիգենցիայի, ծառայողների և աշակերտական կոլեկտիվների մահախոսականներն ու հոդվածները։ Խորը վշտով ցավակցություն են հայտնում ռուս, հայ, վրացի, ադրբեջանցի բանվորներ և ինտելիգենցիան ու խոստանում են շարունակել այն գործը, ինչի համար պայքարեց և հերոսաբար ընկավ Ս. Սպանդարյանը։

Արտահայտելով ռուս առաջավոր ինտելիգենցիայի անհուն վիշտը, Ն. Ն. Կարդաշևը գրում էր. «Հանձին Սուրենի մեծ կորուստ ունեցավ ռուսական ինտելիգենցիայի որոշ մասը։ Եթե այսօր չի լսվում այդ ինտելիգենցիայի վշտի ու ցավակցության խոսքը Սուրենի հիշատակին, այդ նրա համար չէ, որ չի զգացվում կորուստը, այլ որովհետև հնարավորություն չկա ասելու այն, ինչոր կցանկանանք ասել...

Հեռու Սիբիրում, երբ Սուրենի դագաղն իջեցնում էին գերեզման, նրան վերջին պարտքը տալու համար հավաքվել էին հայ, ռուս, վրացի, հրեա ընկերներ։ Սուրենը օժտված էր բնածին խելքով և հուժկու հռետորական տաղանդով։

Սուրենի, ինչպես և այլ վաղաժամ ընկած ընկերների շիրիմների վրա կբուսնեն այն վառ ու անուշահոտ ծաղիկները, որոնցով պետք է զարդարվի աշխատավորների հաղթական տոնը։ Միայն այդ միտքն է, որ կարող է հաշտեցնել Սուրենի կորուստի հետ և տալ մեզ նոր ուժ ու եռանդ շարունակելու այն գործը, որին ամբողջովին նվիրված էր Սուրենը»[1]։

Մահախոսականների ու հոդվածների ամբողջ մի հեղեղ տեղաց դեպի «Պայքար»-ի խմբագրությունը, որը հարկադրված հայտարարեց. «Ցավոք պետք է հայտնենք տեղի սղության և այլ անկախ պատճառներով (ցենզուրայի— Ա. Մ.) հնարավորություն չունենք այդ գրությունները լույս ընծայելու»[2]։

Խմբագրության հայտարարությունը իլիճակի չեղավ կասեցնելու թղթակցությունների հեղեղը, բանվորների, ծառայողների, աշակերտների կոլեկտիվները պահանջեցին հրատարակել Ս. Սպանդարյանի կյանքին ու ռևոլյուցիոն գործունեությանը նվիրված ժողովածու, ստեղծել Ս. Սպանդարյանի անվան ֆոնդ և այն հատկացնել բանվորական մամուլին։ Ժողովածու հրատարակելը ցարական ցենզուրայի պայմաններում հնարավոր չեղավ, բայց Սպանդարյանի անվան բանվորական մամուլի ֆոնդ ստեղծվեց։

Մեր պարտիան, կառավարությունը և աշխատավորությունը ըստ արժանվույն հավերժացնում են Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ, Լենինի տաղանդավոր աշակերտ ու մարտական զինակից Սուրեն Սպանդարյանի հիշատակը։

---

[1] Տես, „Социал-Демократ", № 56, 6 ноября 1916 г., некролог: „Сурен Спандарян (Тимофей)".

[2] «Պայքար», № 42 (46), 16 հոկտեմբերի, 1916։

[3] «Պայքար», № 40 (44), 1 հոկտեմբերի, 1916։

Այն տունը, որտեղ ապրել է Սպանդարյանը 1914—1916 թթ. աքսորում եղած տարիներին, վերջ է ածված տուն-թանգարանի, որի ճակատին մարմարե մեծ տախտակի վրա գեղեցիկ տառերով գրված է. «Այս տան մեջ աքսորված ժամանակաշրջանում 1914—1916 թթ. ապրել է բոլշևիկների պարտիայի լավագույն կազմակերպիչներից մեկը՝ Սուրեն Սպանդարի Սպանդարյանը»: Տուն-թանգարանի բակում կանգնեցված է Սպանդարյանի արձանը։

Ս. Սպանդարյանի տուն-թանգարանը մեկ հարկանի հասարակ փայտաշեն մի տուն է՝ բաղկացած մի փոքրիկ սենյակից, նախասենյակով ու ռուսական գյուղական մեծ վառարանով։ Սենյակը կահավորված է այնպես, ինչպես եղել է Սպանդարյանի ապրած ժամանակ։ Սենյակին կից նոր կառուցված է մեծ սրահ, որտեղ խնամքով պատրաստված ցուցափեղկերի վրա ցուցադրված են Սպանդարյանի կյանքին ու հեղափոխական գործունեությանը վերաբերող հարուստ նյութեր։

Ն. Տուրուխանսկում քաղաքի ծայրին՝ Ենիսեյ գետի ափին՝ կանգնեցված է մեծ հուշատախտակ Սվերդլովի և Սպանդարյանի մեծադիր նկարներով, առնված ապակեպատ գեղեցիկ շրջանակների մեջ։ Նկարների տակ կան համապատասխան մակագրություններ, որոնցում Սվերդլովը և Սպանդարյանը բնութագրվում են, որպես բոլշևիկյան փառապանծ պարտիայի ականավոր գործիչներ։

Կրասնոյարսկում Սպանդարյանի գերեզմանի վրա տեղի քաղսովետը 1953 թ. կանգնեցրեց 7 մետր բարձրությամբ մարմարե հուշարձան։ Միշտ նրա վրա կարելի է տեսնել թարմ ծաղիկներ՝ դրված տեղի հին բոլշևիկների և աշխատավորության կողմից։ Կրասնոյարսկ քաղաքի Մարքսի փողոցի № 41 շենքի (որն այժմ մանկական կլինիկա է) ճակատին փակցված է մարմարե հուշատախտակ հետևյալ մակագրությամբ. «Այստեղ տեղավորված էր Կրասնոյարսկի բժշկական ընկերության հիվանդանոցը, որտեղ 1916 թ. սեպտեմբերի 24-ին վախճանվեց բոլշևիկյան պարտիայի ականավոր գործիչ Սուրեն Սպանդարյանը»:

Կրասնոյարսկի երկրային թանգարանի մի մեծ սրահում ցուցադրված են Սպանդարյանի յուղաներկ լուսանկարները, նրան վերաբերող պատմական փաստաթղթեր։

Վերհիշելով աշխարհում առաջին սոցիալիստական Մեծ հեղափոխության համար մարտնչողներին, ուսումնասիրելով նրանց հերոսական կյանքն ու հեղափոխական գործունեությունը, նրանց անձնուրաց, նվիրված պայքարի օրինակով իրենց նոր կյանքն են կերտում կոմունիզմի միլիոնավոր կառուցողները։